ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՄ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.07.2017թ. ժամը 12^{00}-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս. Պետրոսյանը, Լ.Հովհաննիսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **<<ԷՆ Գրուպ>> ՍՊԸ** -ի, **<<Թասկ>> ՍՊԸ** -ի, **<< ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ >> ՍՊԸ** -ի և **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

  1 չափաբաժնի համար **<<ԷՆ Գրուպ>> ՍՊԸ** -ին,
  2, 3 չափաբաժինների համար **<<Թասկ>> ՍՊԸ**-ին,
  4 չափաբաժնի համար **<< ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ >> ՍՊԸ**-ին,
  5 չափաբաժնի համար **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ** -ին:

- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

- « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՄ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Պետրոսյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Վ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան